

ԵԱՀԿ աջակցությամբ ստեղծված բնապահպանական կենտրոնը կազմակերպում է քննարկում Սևանա լճի վերաբերյալ

ԳԱՎԱՌ, Հայաստան, 28 հունիսի 2007 թ. – Հայաստանի ջրային հիմնական ռեսուրսի՝ Սևանա լճի խնդիրներին էր նվիրված այսօր Գեղարքունիքի մարզկենտրոն՝ Գավառում նորաբաց բնապահպանական տեղեկատվական հանրային կենտրոնում կազմակերպված քննարկումը: Կենտրոնը վերջերս է բացվել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Սևանա լիճը հատուկ ուշադրության կարիք ունի՝ ջրի նվազեցման և բիոզանազանության պահպանման համար: ՀՀ կառավարությունը վերջին տարիներին ջրի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկել է մի շարք միջոցառումներ, սակայն դեռևս կան խնդիրներ կապված Սևանի էկոհամակարգի վերականգման հետ, մասնավորապես ոչնչացման վտանգի տակ գտնվող Սևանի սիգի հետ: Տեղի բնակչության ուտելիքի և եկամտի հիմնական աղբյուրը ձուկն է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է գտնել այլընտրանքային եկամտի տարբերակներ, որպեսզի լճի ֆաունայի վերականգման աշխատանքները լինեն արդյունավետ:

«Այս քննարկումը վառ ապացույց է, թե ինչպիսի դերակատարություն կարող է այս կենտրոնը ունենալ մարզի բնապահպանական կարևոր խնդիրները լուծելիս», ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տնտեսական և բնապահպանական հարցերով պատասխանատու Ջանեթ Կլյոցերը: «ԵԱՀԿ գրասենյակը շարունակելու է աջակցություն ցուցաբերել կենտրոնի աշխատանքներին»:

Նոր Օրիուսի կենտրոնը, որ վերցրել է իր անունը Օրիուսի կոնվենցիայից, որ իրավունք է տալիս հանրությանը բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղեկատվություն, արդարադատություն ստանալու և մասնակցելու որոշում ընդունելուն, նպատակ ունի բարձրացնել իրազեկումը և խրախուսել ակտիվությունը լուծելու մարզի բնապահպանական խնդիրները:

Օրիուսի կենտրոնը մի ֆորում է, որտեղ կենտրոնական և մարզային իշխանությունները, քաղաքացիական հասարակությունը, համայնքը և միջազգային հանրությունը միավորում են իրենց ջանքերը մարզում բնապահպանական իրավիճակը բարելավելու համար:

Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը ողջունեց ԵԱՀԿ գրասենյակի նախաձեռնությունը և պատրաստակամություն հայտնեց խթանել համագործակցությունը բնապահպանական և տնտեսական ոլորտներում:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը աջակցեց Գավառում Օրիուսի կենտրոնի հիմնադրմանը՝ արձագանքելով ՀՀ բնապահպանության նախարարության և մարզային իշխանությունների խնդրանքին: Կենտրոնը 7-րդն է Հայաստանի տարածքում: